9 հունվարի 2020 թվականի N 18 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N 655-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԱՆԻԹԵՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 655-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) հավելվածի 22-րդ կետի «Ծագման երկիրը» սյունակը լրացնել «ԵՄ պետություններ» բառերով.

2) հավելվածը 23-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 24-38-րդ կետերով.

«

24.	9606210000	Պլաստմասսայե կոճակներ	սավանների և այլ տնային տեքստիլի պատրաստման համար	կգ	200	Չինաստան, Թուրքիա, Հարավային Կորեա, Հնդկաստան	3 000 000
25.	5604100000	Ռետինե թել	սավանների և այլ տնային տեքստիլի պատրաստման համար	կգ	2 000	Չինաստան, Թուրքիա, Հարավային Կորեա, Հնդկաստան	5 000 000
26.	5808900000	Հյուսած ժապավենաթել՝ կտորով	սավանների և այլ տնային տեքստիլի պատրաստման համար	կգ	150	Չինաստան, Թուրքիա, Հարավային Կորեա, Հնդկաստան	2 250 000
27.	5808100000	Հյուսած ժապավենաթել՝ այլ	սավանների և այլ տնային տեքստիլի պատրաստման համար	կգ	150	Չինաստան, Թուրքիա, Հարավային Կորեա, Հնդկաստան	2 250 000
28.	3920108900	Պլաստիկ թաղանթ պիտակների տպագրման համար	սավանների և այլ տնային տեքստիլի պիտակավոր-ման համար	կգ	300	Չինաստան, Թուրքիա, Հարավային Կորեա, Հնդկաստան	3 000 000
29.	3207100000	Պատրաստի գունանյութ պիտակների տպագրման համար	սավանների և այլ տնային տեքստիլի պիտակավոր-ման համար	կգ	100	Չինաստան, Թուրքիա, Հարավային Կորեա, Հնդկաստան	1 500 000

30.	5807109000	Պիտակներ՝ տպված	սավանների և այլ տնային տեքստիլի պիտակավոր-ման համար	հատ	100 000	Չինաստան, Թուրքիա, Հարավային Կորեա, Հնդկաստան	3 000 000
31.	5807101000	Պիտակներ՝ գործած	սավանների և այլ տնային տեքստիլի պիտակավոր-ման համար	հատ	150 000	Չինաստան, Թուրքիա, Հարավային Կորեա, Հնդկաստան	6 000 000
32.	3923100000	Պլաստմասսայե տուփ՝ փետուրե արտադրանքի վրա կարելու համար	փաթեթավոր-ման համար	հատ	75 000	Չինաստան, Թուրքիա, Հարավային Կորեա, Հնդկաստան	18 750 000
33.	5903209000	Քաթան նրբախավով՝ բամբակե մանվածքից	սավանների և այլ տնային տեքստիլի պատրաստման համար	մ²	155 000	Չինաստան, Թուրքիա, Հարավային Կորեա, Հնդկաստան	113 150 000
34.	6001920000	Քաթան նրբախավով՝ քիմիական թելերից	սավանների և այլ տնային տեքստիլի պատրաստման համար	մ²	400 000	Չինաստան, Թուրքիա, Հարավային Կորեա, Հնդկաստան	292 000 000
35.	5309119000	Վուշի գործվածք՝ վուշի մանրա-թելերի 85% բաժին կամ ավելի պարու-նակությամբ - սպիտակեցրած	սավանների և այլ տնային տեքստիլի պատրաստման համար	մ²	400 000	Չինաստան, Թուրքիա, Հարավային Կորեա, Հնդկաստան	600 000 000

36.	5309190000	Վուշի գործվածք՝ վուշի մանրաթելերի 85% բաժին կամ ավելի պարունակությամբ - այլ	սավանների և այլ տնային տեքստիլի պատրաստման համար	մ²	400 000	Չինաստան, Թուրքիա, Հարավային Կորեա, Հնդկաստան	600 000 000
37.	5309210000	Վուշի գործվածք՝ վուշի մանրաթելերի 85% պակաս պարունակությամբ - սպիտակեցրած	սավանների և այլ տնային տեքստիլի պատրաստման համար	մ²	400 000	Չինաստան, Թուրքիա, Հարավային Կորեա, Հնդկաստան	600 000 000
38.	5309290000	Վուշի գործվածք՝ վուշի մանրաթելերի 85% պակաս պարունակությամբ - այլ	սավանների և այլ տնային տեքստիլի պատրաստման համար	մ²	400 000	Չինաստան, Թուրքիա, Հարավային Կորեա, Հնդկաստան	600 000 000

».

3) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «8 686 793 500» թիվը փոխարինել «11 536 693 500» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2020 թ. հունվարի 14
Երևան